

## ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

10.02.2017թ. (տասը փետրվարի երկու հազար տասնյոթ թվական),  
քաղաք Կապան, Հայաստանի Հանրապետություն

1. «Արդշինբանկ» ՓԲԸ (գտնվելու վայրի և փոստային հասցեն. «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Գրիգոր Լուսավորչի փողոց, թիվ 13 (տասներեք) վարչական շենք» գրանցման վկայական՝ թիվ 0394, գրանցման համարը՝ 83, գրանցման ամսաթիվը, ամիսը, տարին՝ 25.02.2003թ. (քսանհինգը փետրվարի երկու հազար երեք թվական), այսուհետ՝ «Վարձատու», ի դեմս «Կապան» մասնաճյուղի կառավարիչ Սամվել Դանիելյանին (AK 0669797, տրված 06.12.2010թ., 041-ի կողմից, ծնված 26.03.1948(քսանվեցը մարտի մեկ հազար ինը հարյուր քառասունութ թվական)հաշվառված է «Հայաստանի Հանրապետություն, ք. Կապան, Գ. Նժդեհի 20 շենք, բն. 21»), ով գործում է համաձայն 18.01.2017թ. (տասնութը հունվարի երկու հազար տասնյոթ թվական) տրված № ԻԳ-780-332 լիազորագրի, մի կողմից,

2. Հայաստանի Հանրապետությունը, այսուհետ՝ «Վարձակալ», ի դեմս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի (գտնվելու վայրի և փոստային հասցե՝ «ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 13», պետական գրանցման վկայական 01Բ002246, գրանցման համարը՝ 286.180.06766, գրանցման ամսաթիվը՝ 01.02.2008թ.), որի անունից համաձայն 13.01.2017թ. (տասներեք հունվար երկու հազար տասնյոթ թվական) տրված № ՄՄ/244-17 լիազորագրի հանդես է գալիս Արմենակ Գուրգենի Բեգլարյանը (Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր. AM0335088, տրված 14.06.2011թ (տասնչորս հունիս երկուհազար տասնմեկ թվական) 041-ի կողմից, ծնված 04.02.1965(չորսը փետրվարի մեկ հազար ինը հարյուր վաթսունհինգ թվական) ) հաշվառված «Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, ք. Կապան, Գ. Նժդեհի շենք 20, բն. 8 ») հասցեում, մյուս կողմից,

ընկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

### ՔԱԺԻՆ 1. ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ, ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՍԿՋՐՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Իրավական կարգավորում. Սույն պայմանագիրը կարգավորում է կողմերի միջև ծագած քաղաքացիաիրավական հարաբերությունները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 35 (ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ) գլխի § 4 (ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ) պարագրաֆի կանոնների, այլ իրավական ակտերի և սույն պայմանագրի, եթե այլ բան չի բխում նրանց համաձայնությունից կամ սույն պայմանագրի էությունից:

1.2 Մեկնաբանման սկզբունքներ և հասկացություններ. Եթե այլ բան չի նշված կամ բովանդակությունը կամ համատեքստը այլ բան չի պահանջում, սույն պայմանագրում մեկնաբանումներն ու հասկացությունները հետևյալն են՝

ա) բաժինների անվանումները օգտագործվում են միայն վկայակոչման նպատակով և չեն սահմանափակում կամ ներգործում նրանց նշանակության վրա.

բ) եզակի թվով սահմանված տերմինները (բառերը) արտահայտում են նույնի հոգնակի թիվը ու հակառակը.

գ) որևէ բաժին, կողմին կամ հավելվածին որևէ հղում համարվում է հղում սույն պայմանագրի տվյալ բաժնին կամ կողմին կամ հավելվածին.

դ) ցանկացած փաստաթղթի (ներառյալ առանց սահմանափակման սույն պայմանագիրը) վկայակոչումը կամ սահմանումը կամ հղումը կհամարվեն վկայակոչում այդ փաստաթղթին, որը ժամանակ առ ժամանակ կարող է լրացվել, վերանայվել կամ փոփոխվել սույն պայմանագրի համաձայն, բացառությամբ այն փոփոխությունների, լրացումների կամ վերանայումների, որոնք

կատարվել են սույն պայմանագրի պահանջների խախտմամբ, ընդ որում սույն պայմանագրին հղումը համարվում է վկայակոչում նաև դրա անբաժանելի մասը կազմող փաստաթղթերին (հավելվածներ և այլն)։

ե) ցանկացած անձին վկայակոչումը վերաբերվում է նաև ժամանակ առ ժամանակ նրան փոխարինող անձին կամ նրա իրավահաջորդին։

զ) «Պայմանագիր»՝ նշանակում է սույն Պայմանագիրը։

է) «Կողմեր»՝ նշանակում է Վարձատու և Վարձակալը։

ը) «Վարձակալված տարածք»՝ նշանակում է սույն Պայմանագրի 2.1 կետում նշված վավերապայմաններին համապատասխանող անշարժ գույքը։

թ) «Հաշվետվու ժամանակահատված»՝ նշանակում է յուրաքանչյուր ամսվա 1-ից մինչև հաջորդող ամսվա 1-ն ընկած ժամանակահատվածը։

ժ) «Վարձավճար»՝ նշանակում է Հաշվետու ժամանակահատվածի (ամսական) համար սույն Պայմանագրի 5.1 կետում նշված վարձավճարը։

Ճա) «Օրենսգիրք»՝ նշանակում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը։

Ճբ) «Օրենք»՝ նշանակում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը։

Ճգ) «Պետական լիազոր մարմին»՝ նշանակում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն։

## **ԲԱԺԻՆ II. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

2.1 Սույն Պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետման և օգտագործմանը հանձնել «Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Մելիք Ստեփանյան փողոց, շենք 3» հասցեում գտնվող վարչական շենքի երրորդ հարկից ընդամենը 155.02 (մեկ հարյուր հիսունհինգ ամբողջ երկու հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով, Վարձակալի կողմից իր կանոնադրությամբ նախատեսված գործունեություն իրականացնելու նպատակով օգտագործելու համար։

Վարձակալված տարածքի տիրապետման և օգտագործման իրավունքների փոխանցման հետ միաժամանակ Վարձակալին են փոխանցվում նաև հողամասի այն մասի նկատմամբ իրավունքները, որը զբաղեցված է Վարձակալված տարածքով և անհրաժեշտ է դրա օգտագործման համար։

2.2 Սույն Պայմանագիրը գործում է մինչև 31.12.2017թ. (երեսունմեկը դեկտեմբերի երկու հազար տասնյոթ թվականը)։

Սույն Պայմանագրի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել, եթե Վարձակալն իր մտադրության մասին վարձատուին գրավոր տեղեկացրել է մինչև 25.11.2017թ. (քսանհինգը նոյեմբերի երկու հազար տասնյոթ թվական), հակառակ դեպքում վարձակալության ժամկետը կարող է չերկարաձգվել։

Կողմերը կարող են ցանկացած ժամանակ վաղաժամկետ լուծել սույն Պայմանագիրը՝ այդ մասին մյուս կողմին առնվազն 3 (երեք) ամիս առաջ գրավոր ծանուցելով։

2.3 Վարձակալված տարածքի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցված է Վարձատուի անվամբ, ինչը հիմնավորվում է 18.01.2008թ. Պետական լիազոր մարմնի հաստատած Վարձակալված տարածքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2517659 վկայականով։

2.4 Վարձատուն երաշխավորում է, որ Վարձակալված տարածքը վեճի առարկա չէ, որևէ երրորդ անձի հետ չի կնքվել օտարման, վարձակալության կամ անհատույց օգտագործման հանձնման նախնական կամ նախավճարի պայմանագրեր։

2.5 Պետական լիազոր մարմնի կողմից 26.01.2017թ. (քսանվեցը հունվարի երկու հազար տասյոթ թվական տրված № US-26012017-09-0229 անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքի համաձայն Վարձակալված տարածքի նկատմամբ գրանցված սահմանափակումներ չկան։

2.6 Վարձակալը հավաստում է, որ Պայմանագրի կնքման պահին Վարձակալված տարածքը հանձնված է իրեն և իր տիրապետության և օգտագործման ներքո է սկսած 01.01.2017թ.-ից (երկու հազար տասնյոթ թվականի հունվարի մեկից):

### **ՔԱԺԻՆ III. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### **3.1 Վարձատուն իրավունք ունի՝**

3.1.1 պահանջել Վարձակալից Վարձակալված տարածքն օգտագործել սույն Պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

3.1.2 եթե Վարձակալը Վարձակալված տարածքից օգտվում է սույն Պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանն անհամապատասխան, պահանջել լուծելու սույն Պայմանագիրը և հատուցել վնասները.

3.1.3 առանց Վարձակալի գրավոր համաձայնության՝ Վարձակալված տարածքը ծանրաբեռնել այլ գույքային իրավունքներով:

3.2 Վարձատուն պարտավոր է Վարձակալին նախազգուշացնել Վարձակալված տարածքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին:

#### **3.3 Վարձակալը պարտավոր է՝**

3.3.1 Վարձակալված տարածքն օգտագործել սույն Պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

3.3.2 ժամանակին մուծել Վարձավճարը՝ սույն Պայմանագրի V բաժնում նշված կարգով ու պայմաններով.

3.3.3 Վարձատուի գրավոր համաձայնությամբ իր սեփական միջոցների հաշվին ժամանակին կատարել Վարձակալված տարածքի ընթացիկ և հիմնական վերանորոգումները.

3.3.4 ապահովել Վարձակալված տարածքի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը.

3.3.5 Վարձակալված տարածքում պահպանել սանիտարահամաճարակային, հակահրդեհային պահպանության կանոնները, ինչպես նաև բոլոր այն կանոնները, որոնք գործում են Վարձակալի գործունեության ձևերի և Վարձակալված տարածքի նկատմամբ.

3.3.6 Վարձատուին անմիջապես տեղեկացնել Վարձակալված տարածքի ամեն մի վնասվածքի, վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել (կամ սպառնում է հասցնել) Վարձակալված տարածքին և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վտանգի կանխարգելման համար.

3.3.7 ապահովել Վարձատուի կամ նրա ներկայացուցիչների անարգել մուտքը Վարձակալված տարածք՝ դրա զննման և ստուգման համար.

3.3.8 Վարձակալված տարածքի տիրապետման օգտագործման ընթացքում թերություններ հայտնաբերելիս իր սեփական միջոցներով վերացնել դրանք.

3.3.9 Վարձակալված տարածքն ազատելիս այն սարքին վիճակում հանձնել ակտով՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը.

3.3.10 Վարձակալված տարածքը պահպանել պատշաճ վիճակում՝ կրելով դրա համար բոլոր անհրաժեշտ ծախսերը:

3.4 Եթե Վարձակալված տարածքը Վարձակալի գործողություններով կամ նրա կողմից չձեռնարկված անհրաժեշտ միջոցների պատճառով կհայտնվի վթարային վիճակում, ապա Վարձակալը վերականգնում է այն իր ուժերով և իր սեփական միջոցների հաշվին կամ հատուցում է Վարձատուին պատճառված վնասը << գործող օրենսդրությամբ սահմանված կարգով և չափերով:

3.5 Վարձակալն իրավունք չունի առանց Վարձատուի գրավոր համաձայնությամբ Վարձակալված տարածքը հանձնելու ենթավարձակալության, սույն Պայմանագրով իր իրավունքներն ու պարտականությունները փոխանցել այլ անձի, Վարձակալված տարածքը հանձնել անհատույց օգտագործման, վարձակալության իրավունքը գրավ դնել կամ որպես ավանդ ներդնել տնտեսական ընկերակցությունների և ընկերությունների կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում:

#### **ԲԱԺԻՆ IV. ՎԱՐՁԱԿԱԼ ՎԱԾ ՏԱՐԱԾՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ՂՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Վարձակալված տարածքի հանձնում-ընդունումը կատարվում է Վարձակալված տարածքը Վարձատուին հետ վերադարձնելու դեպքում՝ սույն Պայմանագիրը դադարելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ Վարձակալված տարածքի բնականոն մաշվածության հաշվառմամբ:

4.2 Վարձակալված տարածքի հանձնում-ընդունումը կատարվում է փոխանցման մասին հանձնման-ընդունման ակտով:

4.3 Վարձակալված տարածքը համարվում է հանձնված/ընդունված փոխանցման մասին ընդունման-հանձնման ակտի ստորագրման պահից, որն ստորագրման պահից հանդիսանում է սույն Պայմանագրի անբաժանելի մասերը:

4.4 Վարձակալված տարածքի փոխանցման մասին հանձնման-ընդունման ակտը ստորագրում են Կողմերի լիազորված անձինք:

#### **ԲԱԺԻՆ V. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ**

5.1 Հաշվետու ժամանակահատվածի (ամսական) համար Վարձակալված տարածքի Վարձավճարը կազմում է 155,020 (մեկ հարյուր հիսունհինգ հազար քսան) ՀՀ դրամ:

Վարձավճարը ներառում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի հարկերը, որոնք վճարվում են գործող կարգին համապատասխան:

5.2 Վարձավճարը հետագայում կարող է վերանայվել բացառապես Կողմերի փոխադարձ ընդունելի պայմաններով ու չափով:

5.3 Վարձավճարը Վարձատուին վճարվում է յուրաքանչյուր Հաշվետու ժամանակահատվածի համար՝ յուրաքանչյուր եռամսյակ ոչ ուշ քան մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը անկանխիկ եղանակով՝ Վարձակալի կողմից Վարձատուի թիվ 2470036863230000 բանկային հաշվին բանկային փոխանցում կատարելու միջոցով: Ընդ որում, եթե Հաշվետու ժամանակահատվածը ոչ լրիվ է, ապա Վարձավճարը հաշվարկվում և վճարվում է այդ ժամանակահատվածի համար, իսկ այնուհետև Հաշվետու ժամանակահատվածի համար:

5.5 Կապի, էներգամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման, աղբահանության և Վարձակալված տարածքին առնչվող այլ ծառայությունների հետ կապված ծախսերը կատարվում են Վարձակալի կողմից ինքնուրույն ձևով՝ համաձայն նման ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի, և Վարձավճարի մեջ չեն մտնում:

#### **ԲԱԺԻՆ VI. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԻԱՆԱՆՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Սույն Պայմանագրով նախատեսված Վարձավճարի վճարման ժամկետները խախտվելու դեպքում Վարձակալը Վարձատուին՝ վերջինիս պահանջի դեպքում, վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված Վարձավճարի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.2 Սույն Պայմանագրի այլ պայմանները խախտելու դեպքում խախտող կողմը մյուս կողմին՝ վերջինիս պահանջի դեպքում, վճարում է տուգանք՝ 10.000 (տասը հազար) ՀՀ դրամի չափով:

#### **ԲԱԺԻՆ VII. ՎԱՐՁԱԿԱԼ ՎԱԾ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ**

7.1 Վարձակալված տարածքից Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են Վարձակալի սեփականությունը:

7.2 Եթե Վարձակալն իր միջոցների հաշվին կատարել է Վարձակալված տարածքից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրան վնաս պատճառելու, ապա սույն Պայմանագիրը դադարելուց հետո Վարձակալն իրավունք չունի որևէ հատուցում պահանջել Վարձատուից:

#### **ԲԱԺԻՆ VIII. ՍՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

8.1 Սույն Պայմանագիրը կարող է փոփոխվել Կողմերի համաձայնությամբ՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, որը Օրենսգրքի 468 (չորս հարյուր վաթսուներեք) հոդվածի 1-ին

(առաջին) կետի հիման վրա կնքվում է գրավոր հասարակ ձևով, բացառությամբ սույն Պայմանագրի 8.2 կետում նշված դեպքերի:

Կողմերի ցանկացած միակողմանի գրություն և դրան տրված պատասխան կամ լուրջություն չի կարող որակվել որպես սույն Պայմանագրի փոփոխություն կամ լրացում:

8.2 Վարձակալված տարածքի մակերեսի կամ վարձակալության ժամկետի կամ Վարձակալված տարածքի սեփականատիրոջ փոփոխման դեպքերում Կողմերի միջև մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով կնքվում և նոտարական կարգով վավերացվում է գրավոր համաձայնագիր, որի հիման վրա Վարձակալի ներկայացմամբ կատարվում է վարձակալության իրավունքի փոփոխման պետական գրանցում՝ նոտարական վավերացման օրվանից սկսած 30 (երեսուն) աշխատանքային օրվա ընթացքում, որոնց հետ կապված ծախսերն ամբողջությամբ կատարվում են Վարձակալի կողմից:

## **ԲԱԺԻՆ IX. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

9.1 Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում այն կնքելու (պետական գրանցման) պահից:

9.2 Եթե սույն Պայմանագրի ցանկացած դրույթ որևէ պատճառով անվավեր, ուժ չունեցող, անիրագործելի կամ անօրինական է, ապա այն չպետք է ազդի մնացած ցանկացած կամ բոլոր դրույթների վավերականության կամ իրագործելիության վրա: Կողմերը համաձայնում են, որ եթե սույն Պայմանագրի ցանկացած դրույթ լինի անվավեր կամ անիրագործելի, նրանք բարեխղճորեն պետք է անմիջապես բանակցություններ սկսեն՝ այդ դրույթը այնպես փոփոխելու համար, որ արդյունքում այն լինի վավերական ու օրինական և հնարավորին առավելագույն չափով արտահայտի Կողմերի սկզբնական մտադրությունները՝ այդ հարցում կամ հարցերում:

9.3 Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասը, Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրի պայմանները կիրառվում են 01.01.2017թ.-ից (մեկը հունվարի երկու հազար տասնյոթ թվականից) Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ:

9.4 Սույն Պայմանագրի կնքման պահից Կողմերը չեն կարող հրաժարվել սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունները սույն Պայմանագրի պայմաններին համապատասխան կատարելուց:

9.5 Կողմերը երաշխավորում են, որ որևէ քայլ չեն ձեռնարկի սույն Պայմանագրի անվավեր ճանաչման ուղղությամբ և ցանկացած դատական ատյանում կայնդեն սույն Պայմանագիրն ամբողջությամբ իրենց համար վավեր լինելու փաստը:

9.6 Սույն Պայմանագիրը պարունակում է Կողմերի միջև հաստատված, սույն Պայմանագրի առարկային վերաբերող ամբողջական համաձայնությունը: Կողմերը համաձայնում են, որ գոյություն չունեն այլ հայտարարություններ, երաշխավորագրեր, պայմաններ, երաշխիքներ կամ փոխադարձ համաձայնություններ, բացի նրանցից, որոնք նշված են սույն Պայմանագրում:

9.7 Պայմանագրով պահանջվող կամ նախատեսվող ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում պետք է լինի գրավոր ձևով, ստորագրված լինի այն ուղարկող Կողմի լիազորված անձի կողմից, և պետք է ուղարկվի մյուս Կողմի՝ իրեն հայտնի վերջին հասցեով ցրիչի կամ փոստային առաքման միջոցով: Սույն կետով նախատեսված վերջին հայտնի հասցեներ են համարվում Պայմանագրի X բաժնում նշված հասցեները, իսկ Պայմանագրի 9.9 կետով նախատեսված դեպքում համապատասխան Կողմի կողմից մյուս Կողմին վերջին անգամ ծանուցված իր փոստային հասցեն (գտնվելու վայրը):

9.8 Սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում բոլոր վեճերի լուծումը, բացառելով Հայաստանի Հանրապետության ընդհանուր իրավասության դատարանների ենթակայությունը, հանձնվում է Հայաստանի Բանկերի Միության «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԲԻՏՐԱԺ» հիմնարկին, այսուհետ՝ «Հիմնարկ», որում գործի քննությունն իրականացվելու է «Առևտրային արբիտրաժի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Հիմնարկի կանոնադրությանը և ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին համապատասխան:

Հիմնարկի կանոնադրությունը և ֆինանսական արբիտրաժի կանոնակարգը տեղակայված են Հայաստանի Բանկերի Միության պաշտոնական ինտերնետային [www.uba.am](http://www.uba.am) կայքէջում:

Կողմերը սահմանում են, որ արբիտրաժային տրիբունալը ձևավորվում է Հայաստանի Բանկերի Միության ֆինանսական արբիտրաժի կանոնակարգին համապատասխան:

Կողմերը պայմանավորվում են, որ վեճի քննությունը կիրականացվի միայն գրավոր նյութերի հիման վրա՝ առանց բանավոր քննության անցկացման:

Վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության նյութական իրավունքի նորմերին համապատասխան: Արբիտրաժային դատավարության լեզուն հայերենն է, արբիտրաժի վայրը՝ «Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Կոռյունի փողոց, 19» շենք, 6-րդ հարկ:

Կողմերը պայմանավորվում են, որ սույն Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերի հետ կապված ցանկացած թղթակցություն, դատական կամ արբիտրաժային ծանուցում, այդ թվում՝ դատավարական կամ արբիտրաժային փաստաթուղթ, ուղարկվում են Պայմանագրի 9.7 կետով սահմանված կարգով:

9.9 Կողմերը պարտավորվում են 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել միմյանց փոստային հասցեների փոփոխությունների մասին: Փոփոխությունների մասին մյուս Կողմին չիրազեկելու իրավական հետևանքների ռիսկը կրում է իրազեկելու պարտավորություն կրող Կողմը:

9.10 Սույն Պայմանագիրը վավերացվում է նոտարական կարգով, իսկ սույն Պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Օրենքով սահմանված կարգով՝ սույն Պայմանագրի նոտարական վավերացման օրվանից սկսած 30 աշխատանքային օրվա ընթացքում, որոնց հետ կապված ծախսերը կատարվում են Վարձակալի կողմից:

9.11 Կողմերը հայտարարում են՝

- ա) որ իրավասու են կնքել և իրականացնել սույն Պայմանագիրն առանց օրենքի, կամ պայմանագրային սահմանափակումների կամ այլ անձանց իրավունքների խախտման,
- բ) որ սույն Պայմանագիրն ուժի մեջ է և իրավաբանորեն պարտավորեցնում է իրենց ու պարտադիր է իրենց համար:

9.12 Սույն Պայմանագիրը կնքված է հայերենով, 4 (չորս) օրինակներից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ, մեկ օրինակ նոտարին և Պետական լիազոր մարմնին, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

9.13 Սույն Պայմանագիրը Կողմերի համար բարձրաձայն ընթերցվեց նոտարի կողմից և պարզաբանվեցին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ գործող նորմերը:


9.14 Սույն Պայմանագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարի մոտ պահվող օրինակին:

**ՔԱԺԻՆ Խ. ԿՈՂՄԵՐԻ ԳՏԼՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ՎԱՐՁԱՏՈՒ**

**ՎԱՐՁԱՎԱԼ**  
**ՀՀ ԱԱՀՆ Սոցիալակ.ապահով**  
**Պետական ծառայություն**  
**ՀՎՀՀ 02505511**

**«Արդշինբանկ» ՓԲԸ**  
Հ/Հ ք Երևան Գր Լուսավորիչ 13  
ՀՎՀՀ 02566492  
«Կապան» մասնաճյուղ  
Մ Ստեփանյան 3  
Լիազորված անձ  
Կատավարիչ  
Սարգիս Գանդուխտյան



Իրազորված անձ  
Արմենակ Բեգլարյան

էջ 6/8-ից





# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ապրիլի 2018 թվականի N 490 - Ն

### ԳՆՄԱՆ ԳՈՐԾԱՐՔԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայությանը ոչ բնակելի տարածքի վարձակալության ծառայությունների գնման գործընթացի ընթացքում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի և «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության միջև 2017 թվականի փետրվարի 10-ին կնքված՝ ոչ բնակելի տարածքի վարձակալության մասին պայմանագրի շրջանակներում փաստացի մատուցված ծառայության դիմաց առաջացած վճարումներն իրականացնել հաշվարկային փաստաթղթերի (հաշիվ-ապրանքագիր, հանձնման-ընդունման մասին արձանագրություն) համաձայն՝ Հայաստանի Հանրապետու-

թյան 2018 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրի գծով նախատեսված (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Գույքի և սարքավորումների վարձակալություն» հոդվածով) միջոցների հաշվին:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հնգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել սույն որոշման 1-ին կետում նշված գնման գործարքի վերաբերյալ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով պահանջվող հաշվետվությունը:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի պաշտոնակատարին՝ սույն որոշման 2-րդ կետով նախատեսված հաշվետվության հիման վրա սահմանված կարգով և ժամկետներում ապահովել վճարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թ. ապրիլի 27  
Երևան

